

MOCK ARBITRATION COMPETITION ԱՐԲԻՏՐԱԺ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ 2024

ԿԱՆՈՆՆԵՐ

Արքիտրած խաղ-մրցույթի մասնակցության

1. Կանոնները

- 1.1 Սույն կանոնները (այսուհետ «Կանոններ») սահմանում են Արքիտրած խաղ-մրցույթի (այսուհետ «Մրցույթ») կազմակերպման և անցկացման կարգը, այդ բվում՝ մասնակցող քիմերի, արքիտրաժի ընտրության, ինչպես նաև Մրցույթի հետ կապված այլ ընթացակարգային պայմանները:
- 1.1 Կանոններին առնչվող ցանկացած ժամանակացույց հանդիսանում է դրանց անբաժանելի մասը:
- 1.2 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխել Կանոնները և անհրաժեշտության դեպքում սահմանել լրացուցիչ կանոններ մրցույթի անխափան ընթացքն ապահովելու համար։

2 Կազմակերպիչը և նպատակը

- 2.1 Առեւտրային արքիտրաժին նվիրված տասներորդ ամենամյա Մրցույթն իրականացվում է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) LL.M. Ծրագրի Մեդիացիոն և Արքիտրաժային Կլինիկայի կողմից։
- 2.2 Մրցույթի առաջնային նպատակն է նպաստել Հայաստանում ապագա, ինչպես նաև սկսնակ իրավաբանների ըրջանում վեճերի այլընտրանքային լուծման միջոցների, մասնավորապես, արքիտրաժի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, գրավոր և հուսուրական հմտությունների զարգացմանը։

3 Մրցույթը

- 3.1 Մրցույթը բաղկացած է երկու փուլերից՝ գրավոր և բանավոր։
- 3.2 Մրցույթի լեզուն հայերենն է։

4 Խնդիրը (գործը)

- 4.1 Մրցույթի խնդիրը կազմված է իրական վեճի փաստերի հիման վրա, որը տեղի է ունեցել Հայաստանից դուրս։ Գործի մահրամասները տեղայնացվել են խաղ-մրցույթի համար։ Վեճի իրական մասնակիցների անունները, ինչպես նաև այլ մահրամասները, որոնք կարող են որևէ կերպ նպաստել իրական գործի վերաբերյալ տեղեկության բացահայտմանը, արքիտրաժային գործում փոխարինվել են այլ անուններով կամ մահրամասներով։
- 4.2 Մասնակիցները կարող են դիմել Կազմակերպչին՝ խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ ուղղումներ իրականացնելու խնդրանիով մինչև պատուհան ժամանակացույցում նշված օրը՝ գրավոր աշխատանքների հանձնման ամսարիվ։ Պարզաբանումներ կատարելու դիմում-խնդրանիքը պետք է պարունակի էջի համարը, որտեղ հայտնաբերվել է անհնարինությունը, վերաբերի այնպիսի փաստական հանգանակներին, որոնք էական նշանակություն ունեն խնդրի համար։
- 4.3 Վերոբերյալ դիմումների հիման վրա Կազմակերպչը կարող է հրապարակել համապատասխան պարզաբանումներ, լրացումներ և ուղղումներ Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կայֆի բաժնում հետևյալ հղումով՝
<http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>, որոնք հանդիսանալու են խնդրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը։

5 Թիմները և Մրցույթին գրանցվելու կարգը

- 5.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետուրյան բուհերի իրավաբանական Փակուլտետների, այդ թվում՝ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները, իրավաբանական ուղղություն ունեցող հաստատուրյանների ուսանողները, ունինդիքները։ Յուրաքանչյուր հաստատուրյունից մասնակցության հայտ կարող են ներկայացնել մեկ և ավել թիմեր։ Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ նվազագույնը 2 և առավելագույնը 5 անդամ։

5.2 Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մարզի, սակայն մարզչի առկայությունը պարտապիր չէ։ Մարզիչը կարող է միայն ուղղութել թիմերին՝ պատրաստվելու մրցույթի գրավոր և բանավոր փուլերին։ Մասնավորապես, նա կարող է մրցույթի մասնակիցներին ծանոթացնել արքիտրամի կանոններին և հիմնական սկզբունքներին, հետազոտություն կատարելու մերուդներին։ Մարզիչը իրավունք չունի կազմել գրավոր աշխատանքները մասնակիցների/թիմերի փոխարեն։

5.3 Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա այլազ, որը հանդիսանում է թիմի մասնակիցներից մեկը և որի միջոցով Կազմակերպիչը կապ է հաստատում թիմի հետ։

5.4 Մրցույթին մասնակցելու համար պետք է Կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում ներկայացնել մասնակցության հայտ, որը կարող եք գտնել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտուրյան մագիստրոսական ծրագրի կայքի կայքի բաժնում՝ <http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>։

5.5 Թիմի անդամները կարող են ներկայացվել տվյալ հաստատության իրավասու մարմնի (օրինակ՝ Փակուլտետի դեկանի) կողմից, կամ հենց իրեն՝ ուսանողները, կարող են կազմել թիմեր և մասնակցության հայտ ներկայացնել՝ ստանալով իրավասու մարմնի համաձայնությունը։

5.6 Մասնակցության հայտը ներկայացվում է բուհի իրավասու մարմնի ստորագրությամբ, կնիքով (առկայության դեպքում)՝ սկան արված տարբերակով։

5.7 Պահանջվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին։

5.8 Արքիտրամ խաղ՝ մրցույթին գրանցվելը և մասնակցությունը անվճար է։

6 Գաղտնիություն

- 6.1** Ամբողջ մրցույթի լինթացքում թիմերը չպետք է բացահայտեն արքիտրեներին, քեզ որ համալսարանն են ներկայացնում:

6.2 Մրցույթի լինթացքում յուրաքանչյուր թիմ ունենալու է նույնականացման համար, որին օգտագործվելու է ամբողջ ընդունակությունը: Դա սխալաբար ուշանական է կամքավորությունը և կառավագական է համար:

7 Гендерные имена

- 7.1** Գրավոր փուլի ըքչանակներում յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի երկու գրավոր աշխատանք՝ Հայցվորի դիրքորոշում և Պատասխանողի դիրքորոշում, որոնց **PDF** և **MS Word** տարբերակները պետք է ուղարկվեն adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին, մինչև պաշտոնական ժամանակացույցում նշված ամսաթիվը և ժամը:

- 7.2** Թիմերը կարող են վերահսկնել իրենց գրավոր աշխատանքը առանց տույժի ենթարկվելու մինչև վերջնաժամկետի ավարտը:

- 7.3** Սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո՝ մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը **8:00**, Թիմերը դեռևս կարող են ուղարկել իրենց աշխատանքները, սակայն, այս դեպքում վերջիններիս աշխատանքի վրա կիրառելի է տույժ **2-ից 5 միավորի տափակ:**

7.4 Գրավոր աշխատանքին ներկայացվող պահանջները.

Գրավոր աշխատանքը պետք է բաղկացած լինի.

- տիտղոսաթերթից,
- օգտագործված գրականության ցանկից,
- գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի շարադրումից,
- յուրաքանչյուր պահանջը հիմնավորող փաստարկներից (օրենքի կիրառումը փաստերի նկատմամբ),
- եզրակացությունից

Գրավոր աշխատանքը պետք է կազմված լինի.

- **A4** ստանդարտով և չորս կողմերից ունենա հավասար լուսանցքներ **2.0** սմ,
- ոչ ավել, բայց **15** էջի ստանդարտում, ներառյալ տիտղոսաթերթի ու օգտագործված գրականության ցանկը (յուրաքանչյուր դիրքորոշում՝ Հայցիորի և Պատասխանողի),
- սիլֆայեն (*sylfaen*) կամ այլ յունիկոդ տառատեսակով, **12** տառաչափով,
- հղումները և ծանրագրությունները պետք է լինեն **10** տառաչափով, իսկ աեմսում կատարված մեջբերումները՝ ռեկատոռ (*Italic*),
- կրկնակի տողացածքով (double-spaced)՝ բացառությամբ տիտղոսաթերթի,
- ծանրագրությունները՝ միաբացվածքով (single-spaced),
- յուրաքանչյուր պարբերություն պետք է լինի համարակալված:

Նմուշային օրինակը ներկայացված է նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի (**ՀԱՀ**) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կազմում հետևյալ հղումով՝

<http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>:

7.5 Հայցի և պատասխանի յուրաքանչյուր տիտղոսաթերթ պետք է պարունակի հետևյալը.

- քիմի համարը՝ վերևի աջ անկյունում (տրփում է Կազմակերպչի կողմից),
- նշում այն մասին, թե փաստաբուղը հայց է, թե պատասխան,
- գործի անվանումը (նշված է գործում),
- գործում նշված կողմերի անվանումները (նշված է գործում),
- ամիս, ամսաթիվ, տարեթիվ:

7.6 Գործի փաստերի շարադրումը և հիմնավորումները

Փաստերը շարադրելիս թիմերը պետք է ստանափակվին խնդրում առկա փաստերով և չփորձեն ավելացնել նոր, չապացուցված փաստեր կամ խեղաքայութել դրանք:

Խորհուրդը է տրփում փաստարկները և իրավական հիմնավորումները ներկայացնելիս օգտվել տարատեսակ աղբյուրներից, այդ բարում՝ գիտական հոգվածներից, դասագրերից, արքիտրաժային և դատական գործերից, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններից և այլն:

7.7 Գրավոր աշխատանքի մեջ օգտագործված աղբյուրներին հղում կատարելու համար պետք է օգտագործվին ծանրագրություններ (footnotes):

7.8 Գրավոր աշխատանքը պետք է լինի բացառապես մասնակցող քիմերի անդամների մտավոր գործունեության արդյունքը:

7.9 Երրորդ անձի ստեղծագործության ոչ իրավաչափ օգտագործումը առանց հղում կատարելու, համարվում է գրագորություն (պլաֆիատ): Գրագորություն հայտնաբերելու դեպքում կիրառվի տույժ **10-30** միավոր՝ կախված ծավալից:

7.10 Կանոնների 7-րդ կետով՝ գրավոր փուլի համար սահմանված կանոնները չպահպանելու համար կիրառվի տույժ մինչև 10 միավորի սահմաններում՝ կախված խախտման բնույթից և քանակից:

8 Գնահատման չափանիշները և կարգը

8.1 Գրավոր և բանավոր փուլերի գնահատման չափանիշները հետևյալներն են.

- Փաստերի և իրավունքի իմացույքան համարուրյուն՝ **30** միավոր,
- Ուսումնակրության մակարդակ և օգտագործված աղբյուրներ՝ **30** միավոր (գրավոր փուլ) և **20** միավոր (բանավոր փուլ),
- Պատշաճ վերլուծություն՝ **20** միավոր (գրավոր փուլ) և **30** միավոր (բանավոր փուլ),
- Կազմակերպվածություն և շարադրանքի հստակություն (միայն գրավոր փուլի համար)՝ **10** միավոր,
- Հնետորական հմտություններ / Հարցերին պատասխանելու կարողություն (միայն բանավոր փուլի համար)՝ **10** միավոր,
- Ուժ, գրագիտություն՝ **10** միավոր:

8.2 Գրավոր և բանավոր փուլերը գնահատվում են առավելագույնը **100** միավոր։ Մրցույթի հաղթողը կորուսի եզրափակիչ փուլի արդյունքներով։

8.3 Սահմանված են լավագույն թիմ, լավագույն բանախոս, լավագույն գրավոր աշխատանք և այլ մրցանակներ։

8.4 Յուրաքանչյուր բանախոս բանավոր փուլում կգնահատվի անատական **10**-ական միավորի սանդղակով, որի ընդհանուր հանրագումարով կորուսի լավագույն բանախոսը։ Լավագույն բանախոս կարող են ընտրվել մեկից ավելի մասնակիցներ։

9 Արքիտրները

9.1 Գրավոր աշխատանքները և բանավոր փուլերը գնահատվում են **3** (երեք) արքիտրների կողմից։

9.2 Մրցույթի արքիտրները կլինեն գործող արքիտրներ, փաստաբաններ, իրավաբաններ և դատավորներ։ Մասնակիցները նախօրորդ կծանուցվեն իրենց արքիտրաժային նիստի **3** (երեք) արքիտրների կազմի վերաբերյալ։

9.3 Եզրափակիչ փուլում կարող են նշանակվել **3**-ից ավել արքիտր։

10 Ժամկետներ

10.1 Մրցույթի մասնակցության ժամկետների պահպանումը հանդիսանում է էական պայման։

10.2 Գրանցման վերջնաժամկետից հետո բոլոր գրանցված թիմերին կարամադրվեն բանավոր փուլի անցկացման կանոնները, որոնք կտեղադրվեն նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կայությանը համապատասխան։ <http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/>

10.3 Մրցույթի ժամկետների փոփոխությունների վերաբերյալ կողմերը կտեղեկացվեն թիմի ավագի էլ. փոստի կամ հեռախոսի միջոցով։

11 Կազմակերպիչի հետ կապը

11.1 Մրցույթին վերաբերյալ հարցերը կարող են ուղղել adr@aua.am և law@aua.am էլ. փոստերին կամ գործադրաբառել **077 832955** հեռախոսահամարով։



Arbitrators' Association
of the Republic of Armenia

AUA LL.M. PROGRAM
ADR CLINIC